Ջ. ՏԱՐԻ Թիւ 1,751 Կ. ՊՈԼԻՍ. 1902, ՅՈՒՆԻՍ 29—12 ՅՈՒԼԻՍ 7 ԼՊԻԹԻԼ ԱԽ՛. 1320 — 29 ՀՈՒԶԻՒՐԱՆ 1318 ՇԱԲԱԹ

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԻՆ
Բաղդատեալ 12 դրբ.
ՏԱՐԻԿԱՆ » » 7 Մեծ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱ ՏԱՐԵԿԱՆ 26 Sr.
» Վ.ՅՈՒՄ. 16 ԹԻՒՄ. 9 Sr.
ԱՆԿԻ. ԼԻՒՄ. 119 դրբ. — 20 Տ.Ր. ՀՈՒ.
94 1/2 դրբ. — ԿԻՒՄԻՍ 55 դրբ.

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԳԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱ ԵՒ ՆԵՐՔԻՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան ... 6 Մեծ.
Վեցամսեայ ... 3 »
Չորեքամսեայ ... 1 1/2 »
Ցոյց տրուած թիւի մը 1 Գաւառի
համար ... 20 Փարա
Գինը 1 Ղրուշ

Ադրես՝ Գրութիւններու եւ Դրամներու համար
Բ. Ք. ՉԷՉԵԱՆ
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԿԵԱՆՔԻՆ Ի ԿՈՎԿԱՍ

ՏՓՂԻՍԷՆ ՄԻՆՉԵՒ ԿԱՐՍ.— Ա.

(''ԲԻԶԱՆԴԻՈՆ,,Ի ԹՂԹԱԿՑԷՆ.)

ՏՓՂԻՍ, Յունիս 15.

Ինչպէս յայտնի է, մարդս ոչ թէ լոկ ուսելով խելով կարող կ'ըլլայ իր ակարութիւնը դարմանել, այլ պտոյտն երկրէ երկիր և լաւ ջուրեր բժիշկի դերերէն ևս առաւել իրենց օգտակարութիւնը ցոյց կուտան։ Ես ալ այսպէս զգացած էի և պէտք էր ճամբորդութիւն մը կատարել։ Մայիս 7ին, երեկոյեան ժամ 9ի չոգեկառքով մեկնեցանք Տփղիսէն դէպ ի Կարս։

Կարսի ճանապարհն Ալէքսանդրապոլի ճանապարհն է։ Նոյն կայարանին հանդիպելէ յետոյ կ'անցնի Կարսի ճանապարհը։ Այս անգամ պէտք չեմ տեսներ կրկնել, Տփղիսէն մինչև Ալէքսանդրապոլ ճանապարհի վրայ գըտնուած գիւղերն և ընակչութեան որքանութեան վրայ խօսիլ, վասնզի ևրեք տարի առաջ ըրած ճամբորդութեանս միջոցին, Հայաթերթիդ միջոցաւ նկարագրած էի, այլ միայն պիտի պատմեմ նոյն ճանապարհին վրայ եղած ձախորդութիւնը, որ մէկ օր առաջ պատահեր է և անգիտակցաբար մեզ ալ ճանապարհ ելեր էինք։

Երբ ժամը 5, արշալոյսին, Ջորա Բիւլեխ հասանք, տեսանք թէ մեր չոգեկառքն իր մեկնելու ժամանակը բաւական անցուցած է և ճանապարհորդներն առաջէն օգուտ քաղելով կայարանի պոֆէին երթալով սկսած էին կանչել։ Ո՛ր մէկն առաւօտեան թէյը կ'վայելէր, որ մէկը կ'նախաճաշէր և Թուրք և Պարսիկ ուղեւորք իրենց փոքրիկ սափորիկներն առնելով ձորն ի վար կ'երթային լուացուելու և առաւօտեան նմազը կատարելու։ Մեք ալ զգեստներս մեր առաւօտեան պարեւներն պատրաստել, մեր փոքրիկ հեչտաեռը (սամավար) վառելով նախաճաշն ընել, մինչ այն ժամանակ չէր գիտեր ոչ ոք թէ ինչ էր այսպէս սպասելու պատճառը։ Սոյն կայարանը կէս ժամէն աւելի չէր կեցներ։ Նոր ճամբորդներ և բեռներ յանձնել և առնելով այս ամէնը կատարուելէ յետոյ, երբ հանդարտ կեցած չէր սուլեր ճամբայ ելնելու, հարցուցինք թէ ինչի՞ կ'սպասէր և յանկարծ իմացանք թէ Համամլու կոչուած տեղէն 8 վերստ հեռու լեռ մը փուլ եկեր է առջի գիւղերը (փլեր է)։ Բաբերախտաբար վտանգ մը չէ պատահեր։ Արկածը պատահեր է երեկուընկ։ Թիւնները վերլսելէ յետոյ։ Ասոնց ետեւ մի՛ պրաօցէ եթէ սոյն միջոցներուն պատահէր, երկաթուղւոյ ամբողջ չարքն իր ներքև պիտի ծածկէր։ Արդէն բաւական երկարութեամբ երկաթեայ գծերը ծածկեր էր՝ փոքրիկ լերան մը ձև տալով։ 3 ժամ սպասելէ յետոյ չարժեցաւ և քիչ յետոյ հասանք սոյն վայրն ուր լերան տակը կեցաւ։ Առաջինս բարձացեր էր լեռ մ'ալ։ Ամէն ոք վակոններէն վար ցատկեց և իր հետն ունեցած մնուկները վար առնել սկսաւ։ Վրայ թափուեցան ամբոխն աչխատող 1—200 գիւղացի աչխատաւորք, մէն մի բան մ'առնելով, մէկն իր փոքրիկները մէկ թեւէն և միւսը միւս թեւէն և կինը քիչ մեծերուն ձեռներէն բռնած, մի ուրիշն օգնող չունենալով որդիքը բոլորովին առած, ունեցած կարասիքը վար դնել տուած, կ'սպասէր իրեն օգնութեան ելթել, որ չըլայ թէ բան մը կորսընչէ, վասնզի անագին խառնաժամուժ մը խռնուած էր վակոններուն առաջը։ Շոգեկառքը կ'սուլէ։ Ճամբորդները չուարած կ'վախնան թէ չենն հասներ ժամանակին. հրմշտուկ, չասպուտ, երախաներու վայնասուն, աչխատող մշակներ մէյ մէկ բեռ ձեռք ձգած կ'վազեն դէպ ի միւս վակոնը, առանց աղ ու ձախ նայելու, իսկ տէրն եռեւէն այն անագին խռնուժին մէջ կ'վազէ և կ'պղաւէ «ծանր գնա», զի մէկ երկաթուղիէն միւսն երթալու համար բաւական ճամբայ պէտք է քալէ։ Մէկ խօսքով կրնամ ըսել թէ կեանքիս մէջ այսպիսի վայնասունի առաջին անգամ պատահած էի, եթէ պատահած չըլլայի տեղւոյդ մեծ կրակի մը միջոցին արկածեալներու։

Փոխադրուելու վակոնիս քիչ և ժողովուրդը չատ բեռ դնելով, կեղտոտ վակոններ եռեւը կապած էր։ Սահիլեալ չարչարուելով, բարձր տեղ կանգնած, այլ վակոնները պէտք էր լցուէինք, երկրորդ կարգի տոմսակ առնողներն իսկ։ Ամենքը իրան ի իրուն դիզուելէ յետոյ ճամբայ ելանք և ժամ 10½ին հասանք Նալպան գիւղը, որ 150 տունով հայարնակ գիւղ մ'է և ունի մի եկեղեցի. դպրոց չունի այժմ։ Սոյն կայարանէն մինչև Ալեքսանդի գիւղը, որ մէկ քառորդ ժամ կ'տեւէ, վայրաչարժն եռեւէն հրելով կ'տանէր 25 վակոն։ Այստեղ ճամբան երկուքի բաժնուած ըլլալով, վայրաչարժն առաջ անցաւ և ժամս թիւնէլ, որ հինգ վայրկեան տեւեց խիստ արագ երթալով, և գրեթէ այս թիւնէլի բերանն էր Ագռուլաղ անուն 200ի մօտ տուն հայարնակ գիւղը, որ ունի մի եկեղեցի, դպրոց՝ ոչ։ Դարձեալ 4—5 գիւղ անցնելէ յետոյ հասանք Թօփուզլաւ, որ դէպէ դէմ 100ական մնաւոր գիւղեր են, ուստից կ'տեսնուի Ալէքսանդրապոլի կայարանն հասանք ժամ 2ին և կէս ժամ սպասելով ելանք և հասանք կէս ժամէն Ղզըլ—Զախչախ գիւղի կայարանը։ Սա բաւական ընդարձակ գիւղ մ'է, որ նահապետական դիրքը տակաւին չկորսնցնելով, հայաթնակ գիւղ մ'ըլլալը կ'հաստցուի։ Նաև կան այս տեղէն երեւացող ուրիշ մի քանի գիւղեր, կանգնով պատած անագին դաշտին կրնանկները, որք սիրուն տեսարան մը կը ներկայացնեն իրրև գծագրուած պատկեր։ Ալէքսանդրապոլէն մինչև Կարս ժամս չորս ժամու ճամբայ է երկաթուղիով, տափարակ ընդարձակ դաշտ է, և ունի բաւական գիւղեր մեծ և փոքր։ Երկրագործութեամբ կ'զբաղի հասարակութիւնն և բաց ի մէկ—երկուքէն, բոլորն ալ Հայ գիւղեր են, որոնց ժամանակն հասած էր աչխատութեան, ինչպէս որ կ'աչխատէին իրենց եղները գութաններուն ետեւ, գեղջկական երգեր ու մեղեդիներ կարգալով ուրախ դուարթ, և իրենց կանայք ու փոքրիկներ կարմիրներ հագած, հերկուած տեղերուն գլուխները նստած, քիչ մը չափահասներն եղներուն քովէն եղները կ'մտրակէին։ Հերկուած տեղեր ալ եղներ, կովեր, արջառներ, կովեր ևն. ցիրուցան կ'արածուէին, որոց վրայ փոքրիկ հովիւներ էին պահապան, իրենց ուտելիս պաշարը ծրար ըրած մէչքերնին կապած, ձեռքերնին մէյ մէկ երկայն ցուպ։

Այս գեղեցիկ տեսարանները դիտելով կ'անցնէինք չարունակ, աչքի առջև բերելով նոր նոր տեսարաններ։ Հասանք ժամ 7ին կարսի կայարանը։ Հետաքրքրութենէ չարժուել այս անուանի քաղաքը կ'ուզէինք տեսնել։

Քաղաքը կայարանէն բաւական հեռու է, միւս գիւղերուց և քաղաքներու նման։ Կառք մը վարձելով կանխաւ որոշած տեղերնիս ժամանեցինք. սիրով ընդունուեցանք։

Նոյն օրը հանգիստ ըրինք, զի թէ յոգնած էինք և թէ քնատ։ Գրեթէ երկու օր և մէկ գիշեր կառախուժէ կառախուժ անցնելով զանազան չարչարանքներէ ազատած, մեր ևրեխաներս ևս ժամուն հանգստին կ'ցանկայինք։ Ցայտնի է ձեր ընթերցողաց, տեղւոյս Ներսիսեան հոգևոր դպրոցի երաժիշտ Պ. Նկավեան, քառաձայն եղանակով պատարագի երգեցողութեան հեղինակ է և այնկերտներ կ'հանցնէր։ Ցաւօք սրտի կ'ըսեմ թէ նա ալ Ալեքսանդրապոլ գացող մեր կառախուժքին մէջ կ'գտնուի եղեր, խելագարուած վիճակի մէջ։ Քաթա Բիլիսէ կայարանն ապատած միջոցնուս, ընկերի մը հետ, երբ երկաթուղւոյ երևայնութեամբը կ'ձեմէինք, յանկարծ պատուհանի մը առջև գլուխ մը երեւցաւ ու զմեզ բարեւեց ծիծաղելով։ Մէկէն ճանչցանք զինքը, և յառաչացանք տեսութեան ընելու, յանկարծ ներս գնաց ու սկսաւ լուսցուիլ։ Մէկէն քովի օթեակին դուռը բացուեցաւ և մեզ ներկայացաւ ռուս 30 տարեկանն անցած կին թէ օրիորդ չեմ գիտեր և մեզ հարցուց թէ կ'ճանչէի՞նք զինքը։ Այո՛, ըսինք, բայց ինչ բան է այս, մեծին էք և ուր այսպես կ'երթաք։ Ինչպես տեսաք, ըսաւ, մեկ քանի օր է խելքը կորսնցուցած է, բժիշկներու խորհուրդովը Երևանի Հիւանդանոցը կ'տանինք, այնտեղ եթէ չդարմանուելու ըլայ, Օտեսա պէտք է տանինք։ այսպես խորհուրդ տուած են բժիշկները։

—Բայց լաւ, ի՞նչ էր արդեօք պատճառն այս խելագարման։

=Ինքը դպրոցին հանած ու իր տեղ ուրիշ մէկը դրած էին, Բեզերսպուրկի Թնսպերվանօրիայի նախկին ուսանող, ոչ ուսումնասէր Պ. Մամանեան։

Այս միջոցին երկաթուղին սուլեց, մեք ալ ձեռք թոթուելով մեկնեցանք։ Ընկերս լաւ ճանչցուց զինք։ Ընկերս ալ Բեզերսպուրկի Դեղարուեստից Հաամալսարանն աւարտած ըլլալով իր ուսումնքը, սոյն քաղաքին մէջ տեսած և ճանչցած է։ Կ'ըսէ թէ Պ. Մամանեանն լոկ երգեցողութիւն դիտէ, այսինքն ֆոնեկ(նոթ)ին (երգահանութիւն) չէ գիտեր, մին եթէ իրեն մի բան ներկայացնելով, նզանակ մը չինել տալ ուզէ, չէ կարող, որովհետև այն վիճակին չէ հասած, ուստի ևս աւարտած և վկայական ձեռք բերած չէ, ինչպես այդպիսի մի կանոնաւոր դպրոցի մը մէջ պաշտօնի կոչուեր է, որ չունի վկայական և չի գիտեր երգեցողութեան արհեստը։ Մինչ մեք այս խօսակցութիւններու մէջ էինք, հասանք փուլ եկած տեղը։ Աւենքնիս ալ փոխադրուելու կ'պատրաստուէինք, երբ խեղճ հիւանդին ալ թեւերը մրսնելով, քալեցնելով փլատակներու վրայէն կ'փոխադրէին։ Այստեղ մէկզմէկ կորսնցուցինք, խառնուելով խուռներամբ կ'հաւաքուինք, առանց իմ կողմէ գին մը որոշելու, դուք ձեր կողմէ հինգ—վեց հոգի ընտրեցէք ամէն ազգէ, ինչ որ գնահատեն այն առէք, քանի որ իմ գեանի վրայ ազօթքառուցուր։ կ'ընտրուի պիտի կառուցուի։ կ'որոշուի կուտան եղածին վրայ չէնքը կառուցանել, որ 2,000 հոգի պիտի պարունակէ։ Ցատակագիծը կ'պատրաստուի Լենտասանցի երկրաչափի մը միջոցաւ և կ'ներկայացուի տեղւոյն Կուպերնատորին, որ նաև դեներալ մ'է, և մեծութիւնն և բարձրութիւնը տեսնելով ամարկութիւններ կ'տնտէ և չափեր առնրագրել։ Բայց Փոխանորդ Հայրը փատաբանօրէն ամէն առարկութիւններ տալով և օրինական պատասխանիներ տալով և փաստեր ցոյց տալով կ'տամոզէ և վերջապէս կ'չարի անոր սիրտը, կ'յաղդի ստորագրել տալ, և մեծ ուրախութեամբ կ'բերէ ցոյց կուտայ ժողովրդեան, որ այս չափոգութիւնը տեսնելով մէկզմէկ կ'նորհաւորէ։

ԹՂԹԱԿՑԻ

ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԵՒ ՍՍԱԿԱՆ ՏԻՍԱՐԱՆԸ

Անցած կիրակի Հայ—Հռոմէականաց Պատրիարքարանի եկեղեցին մէջ տեղի ունեցած Եպիսկոպոսական ձեռնադրութեանց առթիւ Հայաբնակ Հայ հռոմէական լրագիրներ ըսած էր թէ՝ «օծման կերպն ու եղանակը Սսական է, քանի որ առ այս գործածուած ձեռագիրն ալ ընդօրինակութիւնն է Սսոյ մէջ գըտնուած Մաշտոցին։»

Բիւզանդիոնի ընթերցողներն անշուշտ համոզումն ունեցան թէ՝ Սսոյ և Հայ—հռոմէականաց Պատրիարքարանի եկեղեցիին մէջ եղած ձեռնադրութիւնը նոյն են, քանի որ միևնոյն ձիսարանով կ'կատարուին։ Սսոյ մէջ գըտնուած ձիսարանը ՇՄԱ. (1102) թուականը կ'կրէ, բնական է որ ասոր յարելեանն է նաև Մայր Աթոռին մէջ գտնուածն ալ։ Սակայն ձիսարանն երբէք փոփոխութիւն մը կրած չէ, բարեզեղ Ա. Անեցի կաթողիկոսին օրէն սկսեալ՝ նոյն ձիսարանով եպիսկոպոս և կաթողիկոս օծուած են Հրիփսիմեան Պահլաւունին 1113ին, նոյնպես իր եղբայրը ներսէս Շնորհալին և այլք մինչև հիմա։ Հայ—հռոմէականները կրնան իրենց ձեռնադրութեանց ձիսարանն ընդօրինակած ըլլալ ասոր կամ անոր, իրենց վերապահելով անշուշտ անոր մէջ յաւելումներ կամ չապաւումներ ընելը, վասն զի Հայոց և Հայ—հռոմէականաց Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը ձեռերու մէջ տարբերութիւններ ունին իրարմէ։

Եպիսկոպոսական կամ կաթողիկոսական ձեռնադրութիւնը թէ՛ ի Սիս. էջմիածին և թէ ի Սիս Հայ—Ուռաքլական եկեղեցւոյ Ս. Հայրապետաց ընդունած ձեւովը ու եղանակովը կ'կատարուին, ինչպես ժամանակին ուսեալ ունեցած եմ Սսոյ Աթոռին մէջ կաթողիկոսական և Եպիսկոպոսական ձեռնադրութեանց և օծման նկարագրութիւն ընել Բիւզանդիոնի մէջ, որ միևնոյն է Մայր Աթոռին մէջ կատարուած ձեռնադրութեան հետ։ Վասն զի կարելի չէ որ Հայ. եկեղեցին, ուր ուրեք ալ գտնուած ըլլայ, ձեռնադրութեանց համար զատ զատ և կամ իրարմէ տարբեր ծիսարաններ գործածէ։

Սա չափ միայն գիտենք որ էջմիածնի ծիսարանին մէջ Սսոյ Աթոռին նկատմամբ քան մը աւելցուած էր հանդուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի ժամանակ, ինչ որ այժմ ջնջուած ու վերցուած է ներկայ Ս. Հայրապետի օրոք ու հրամանով։ (*)

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՈՒԽՏԱԴՆԱՅՈՒԹԻՒՆ Ի Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄՇԵՑ (*)

Ուխտաւորաց բազմութիւնն անհամբեր կ'սպասէր Պատրիարքական Փոխանորդ Հօր Սոսրով Մ. Վրդ.ին, սակայն մինչև Դ. օր չերեւցաւ, կ'ենթադրուի Առաջնորդական գործերը ծանրացած էին Հօր վրան, որ չկարողացաւ Դ. օրուընէն աւելի առաջ ժամանել, ուստի երբ լսուեցաւ անոր գալուստը, ժողովուրդը կրկին դանեռէն դուրս թափելով՝ դիմաւորեց զայն մինչև Բամբասանաց բլուր կոչուած վայրն և ոմանք մինչև «Վերի Հասատաւքը, գրեթէ տասն վայրկեան հեռաւորութեամբ։ Վանական Մխիթարեանութիւնն ևս ուսուցիչներով հանդերձ՝ արտաքին դռնէն դուրս ընդ առաջ ելան Ս. Հօր, որ անմիջապես ձիէն վար իջնելով՝ աղլուհեց զանոնք և յաջորդաբար ընթացքով յառաջացաւ արտաքին դուռը։ Ուխտաւորաց հոծ բազմութիւնն արգելք կ'ըլլար Փոխանորդ Հօր քայլերուն, որ իր օրհնութիւնները կ'սփռէր առ ինքն դիմողներուն, որք համբոյրներով կ'ծածկէին անոր փէշերն ու ձեռքերը։ Արտաքին դռնէն մտնելով արտաքին բակը, ողջունեց ներքին բակն առաջնորդող դրան երկու կողմ բարեաի կեցողները։ Պատրիարքական Փոխանորդ Հայրը մինչեւ բակը մտնելով դիմեց դէպ յեկեղեցին և դուռն համբուրելով՝ ետ դարձաւ յԱռաջնորդարան։

Հետեւեալ օրն՝ Համբարձման Եշ.՝ կարճն արեզան էր պատարագիչը։ Ճաշու գրոց ընթերցումէն վերջ՝ Սոսրով վարդապետ աւուր պաշտաձի քարոզ մը խօսեցաւ, նիւթ ընտրելով նոյն օրուան Օրննութեան շարականի Ա. տունը, «Համբարձաւ Տէրն մեր յերկինս...»։ Ս. Հայրը կ'քարոզէր պարզ, յստակ, դիւրըմբռնելի բառերով։ Ս. Հաղորդութեան բաշխման ատեն, Սոսրով վարդապետը չդիմանալով անհամար ժողովրդեան աղաղակին ու աղաղակին, դուրս ելաւ եկեղեցիէն։ Երդեցիկ աչակերտներէն քանի մը փոքրեր ոտնակոխ եղան դէպ ի Ս. Հաղորդութիւն դիմող բազմութեան հոսանքէն և հազիւ հազ ազատուելով՝ դուրս հանուեցան։ Ս. Հաղորդութեան բաշխումը տեւեց ժամաւորապէս ժամ մը, չնայելով որ երկու սեղանէ կ'բաշխուէր։ Պատարագէն անմիջապէս վերջ ուխտաւորներն սկսան քաշուիլ հեռանալ, սակայն դեռ նոյն օրը կ'մնար մի քանի

(*)։ —Սսոյ Աթոռին դէմ ուղղուած այն պարբերութիւնը ջնջել տուողն էր Մակար Կաթողիկոս։ Ծ. ԽՄԲ.

(*)։— Շար. երեկ ինչեն և վերջ։

ՇԵՐԼՕՔ ՀՕԼՄՍ ԵՒ ԻՐ ԳԻՒՏԵՐԸ (6)

ԳԼՈՒԽ Բ.

Առաջին չաբթուն, այցելութիւն չընդունեցինք։ Վերջ ի վերոյ պիտի կարծէի որ ընկերս ալ, ինծի պէս, բարեկամ չունէր, երբ, քիչ քիչ, նշմարեցի որ ընդհակառակն չատ բարեկամ ունէր ընկերութեան տարբեր տարբեր դասակարգերուն մէջ։

Թ մէջ այլոց նշմարեցի նիհար մարդ մը, ևս ու խորաթափանց աչքերով, որու դէմքնած գլուխը տարտամ նմանութիւն մ'ունէր մուկի մը գլխին հետ։ Մէկ չաբթուան մէջ 2—3 անգամ եկաւ և ինծի ներկայացուեցաւ Մր. Էդգրէտ անունով։ Ցետոյ, առտու մը տեսայ չատ վախկոտ աղիկ մը, որ կէս ժամու չափ խօսեցաւ Հօլմսի հետ։ կէս օրէն ետքը, կարգն եկաւ մոխրագոյն մազերով մարդուկի մը, հրեայ փերեզակի ճչմարիտ դիրք մը, որ տասրորինակ գերագգուածութեան մը ենթարկուած կ'երեւար։ Գրեթէ անկէ անմիջապէս ետքը, ներս մտաւ հինաւուրց կօշիկներ հագած պատուական կին մը։ Ուրիշ օր մը, այցելութեան եկողն էր ճերմակ մազերով և յարգելի երեւոյթով մարդ մը։ Անգամ մ'ալ երկաթուղիի պաշտօնեայ մը, որ կը ճանչցուէր իր թաւիչէ հասազգեստէն։ Աչէն անգամ որ այս այլանդակ անձերէն մին դար, Շէրլօք Հօլմս կը խնդրէր ինձմէ որ սայլէն իրեն ձրգեմ։ Ես ալ անենակս կ'քաշուէի։ Մինչ ներսում կ'խնդրէր ինձմէ՝ անհանգստութիւն պատճառելուն համար։ «—Բայց, կ'ըսէր, պէտք է որ այս սենեակն իբր գործատեղի ծառայէ ինծի։ Այս մարդիկն իմ յաճախորդներս են»։ Կրնայի այս պարագային օգտուիլ և հարցաքննել զինք, եթէ խղճահարութիւն չունենայի իր խոստովանութիւնն այսպէս բռնի խլելուս։ Սկսած էի հաւատալ թէ պատճառ ունէր իր գործերուն հաղորդակից չընելուս, բայց կարծիքս բոլորովին չդրեց ինք անձամբ խօսելով այն խնդրին վրայ որով ա՛նքան կ'հետաքրքրուէի։ Մարտ կին էր,— կարեւոր պատճառներ ունին ճչմարիտ յիչելու այս թուականը— Սովորականէն քիչ մը կանուխ եկած ըլլալով, Հօլմսի քով գացի, տակաւին իր նախաճաշը չաւարտած։ Մեր տանտէրն այնքան լաւ գիտէր սովորութիւններս որ իմ նախաճաշս պատրաստած չէր։ Մարդկային բնութեան յարակից անհամբերութեամբ, զանգակը զարկի և հրաման տուի նախաճաշս բերել։ Ցետոյ, սեղանին վրայ Հանդէս մը տեսնելով, սկսայ թղթատել, մինչ ընկերս վրան կարագ քսուած իր հացը կ'լափէր լուիկ մնչիկ։ Օգուտածներէն մէկուն վրայ մատիտով նշան մը ուշադրութիւնս գրաւեց և բնականաբար ամէնէն առաջ այն յօդուածը կարդացի։ Վերնագիրը, կնճռոտ էչէրէ, քիչ մը յաւակնոտ երեւցաւ ինծի։ Հեղինակը կ'չնայար իւեր հասնել բաւականակ օգուտը զոր ստուգապես դիտող մարդ մը կրնար քաղել ամենօրեայ դէպքերէն, խղճամիտ ու մեթոտիկ քննութեան մը բովէն անցընելով զանոնք ամենամեծ խնամքով։ Այս մասին ինչ որ կ'ըսէր, խորամանութեան և տղայատութեան տարօրինակ խառնուրդ մը երեւցաւ ինծի։ Տրամաբանութիւնն ո՛րքան ալ ազդ ըլլար, հետեւութիւնները չափազանցութեան տարուած էին։ Դէմքի մը վարկեանական արտայայտութիւնը, դէնքերի մը կծկուիլը, աչքի մը քթթումը բաւական էին, կ'ըսէր հեղինակը, անհատի մը ներքին մտածումներն հասկնալու։ Ան որ դիտելու և վերլուծելու վարժութիւն ունի, չի կրնար սխալիլ, և այսպէս կ'յանգի նո՛յնքան ստոյգ և մաթեմատիքական եղրակացութիւններու որքան եւկլիդէս՝ իր երկրաչափական հռչակաւոր տեսութիւններուն (théorème) մէջ։ Վերջապէս, այդ կերպով ձեռք բերուած արդիւնքներն այնքան հիանալի էին որ գործածուած մեթոտներուն տեղեակ չեղողներու աչքին կախարդութիւնէ մը ծագում առած երեւոյթներու պէս կ'երեւային ի հարկէ։ «Թող, կ'ըսէր հեղինակը, Լուրի պարզ կաթիլ մը տան տրամաբանող մտքէ զուրկ չեղող մարդու մը, և անիկա կարող պիտի ըլլայ Ազլանտեան Ովկէանոսի կամ Նիագարայի Լրվէժին գոյութիւնն հետեւցնել, առանց նախապէս ամենափոքր գաղափար մ'ունեցած ըլլալու մէկին կամ միւսին վրայ։ Իւրաքանչիւր մարդու կեանքն երկար չղծայ մ'է, որուն միակ օղակը գիտնալ կը բաւէ միւսները վերակազմել կարենալու համար։ Ասոր պէս են հետեւութիւն հանելու և վերլուծում ընելու կարողութիւնները, ինչպես Գիտութեան բոլոր ճիւղերուն մէջ ընդհանրապէս։ Համբերատար և խորունկ ուսումնասիրութեամբ մը միայն կրնան ձեռք բերուիլ անոնք, և մարդկային կեանքն այնպէ՛ երկար չէ որ մտկանացու մը վերջին կատարելութեան հասնի՝ այս ճիւղին մէջ։ Բարոյական ինչպէս իմացական տեսակէտով, այս նիւթին այնքան բազմակողմ է որ աւելի ազէկ է ամէնէն առաջ պարզ խնդիրներով զբաղիլ։ Երբ մարդու մը կ'հանդիպինք, պէտք է որ մէ՛կ ակնարկով գիտնանք անոր պատմութիւնը, արհեստը, պաշտօնը։ Այս վարժութիւնէն կարեւոր է, և որչափ ալ տղայական երեւայ, ասիկա դիտելու, զննելու մեր կարողութիւնը կ'արթ և մեզ կ'սովրեցնէ թէ ո՛ր և ի՛նչպէս պէտք է ուղղենք մեր ակնարկը։ Ինծի՛ ուրեմն եղունգներ, գգեստներ, գլխարկ, կօշիկ, տաբատին ծունկի կողմի կորութիւնները, կամ ձեռնութիւնները, բթամատին և ցուցամատին գրտութիւնները, դէմքին արտայայտութիւնը, չապիկին թեւերն և պիտի ունենանք չատ մը նշանակներ որով կրնանք հիմնովին ճանչնալ ինչ որ կը վերաբերի ձեր ուսումնասիրութեան առարկայ եղած մարդուն։ Կարելի չերեւա՞ր որ քիչ չատ ուշիմ մարդ մը այսքան մտացնալ տարրերով կարող ըլլայ յատկ և ստոյգ արդիւնք մը ձեռք բերել այդ մարդուն ի՛նչ տեսակ մարդ մ'ըլլալուն վրայ։»

—Ա՛ս ի՛նչ խառնաչփոթ բան է, պոռացի Հանդէսը սեղանին վրայ նետելով։ Ասանկ ապուշ բան կարդացած չէի երբեք։

=Որի՞ համար է, հարցուց Շէրլօք Հօլմս։

—Բայց սա յօդուածին սխալին համար, ըսի գոլովս սեղանին վրայէն Հանդէսը ցոյց տալով և նախաճաշիս սկսելու պատրաստուելով։ Դուք կարդացած ըլլալու էք, քանի որ նշան ըրած էք։ Ճարտարօրէն հիւսուած է, ստոր ըսելիք չկայ, բայց նորէն չիւերս թունդ կ'կանչէ։ Աչքիս առջեւ կ'բերեմ այս անսովոր և սիրուն վարդապետութեանց դատարկապորտ հեղինակը՝ իր աչխատութեան սենեկին մէջ հանգստաւէտ թիկնաթոռի մը վրայ սիգապանծ նստած։ Բայց վերջապէս գործնական ի՛նչ կայ ասոնց ամէնուն մէջ։ Ադ ճարպիկ պատրոնը թիւնէլի մը երերդ կարգի վակոնին մէջ թխմեցէք, և խնդրեցէք որ իր գործը նատողներուն պաշտօնն ըսէ ձեզի։ Դրաւ կ'նայիմ որ պիտի չկրնայ մէկէն ելնել։

ՍԸՐ Ա. ԲՕՆԸՆ—ՏՕՅԼԻ

Թրգմ. Ժ. ԵՒՐԱԿԱՑԻ (Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ի՞նչ կարծիք ունիք Ամերիկայի հայ գաղութի մասին։

— Ամերիկայի հայ գաղութը ունի 80,000 հոգի։ Ունի 30,000 հոգի կին։ Ունի 18,000 տղայ։ Ունի 17,000 աղջիկ։ Ունի 30,000 հոգի կարդացող։ Ունի 3 օրաթերթ։ Ունի 2 շաբաթաթերթ։ Ունի 1 կիսամսյա։ Ունի 1 ամսագիր։ Ունի 1 տարեգիրք։ Ունի 1 գրական հանդես։ Ունի 1 կրոնական հանդես։ Ունի 1 կանանց հանդես։ Ունի 1 մանկական հանդես։ Ունի 1 կրթական հանդես։ Ունի 1 գրական ընկերություն։ Ունի 1 գրական ընկերություն։ Ունի 1 գրական ընկերություն

ՎԱՃԱՌՔԻ Ի. ՆԱՖՓԱԼԵԱՆ

յարմարագոյն տարազներ պատրաստելու համար կը հրաւիրէ ամենայն հաճախորդներ իր վերջին ձմեռնային նորագոյն ձեւերուն ցուցադրութեան, որ տեղի պիտի ունենայ Ուրբաթ 7/20 Դեկտեմբեր (Հ. Թ.) Մարտ, Շաբաթ եւ Կիրակի 8, 9, 10 Դեկտեմբեր (Հ. Թ.) Մարտ, ժամը 2-էն մինչեւ 6 ե. ցերեկուան։

Հասցէ՝ Պէյօղլու, Ֆրանկ Ալեմտար, Ա. Ռուսական Դեսպանատունին դիմաց, Ա. յարկ, Թիւ 1։

—Ինչո՞ւ համար կը ծախէք ձեր ամբողջ ունեցուածքը։

—Ամուսինս մեռաւ, ես ալ կ՚ուզեմ ամուսնանալ ուրիշ մարդու մը հետ, որ ինծի պէս ալ ունեցուածք չունի։

Ֆրանսերէնէ թարգմանեց Ա. Ս.

Ա. ՏԻՐՈՒՏԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԼԻՈՎԻՆԱՅԻ ԳՆՈՒՄՆԱՅԻՆ
ՄԱՆՈՒԱԿԱՐԱՆ ՏՈՒՆ
ՄԱՆՐԱԿ ԵՒ ՄԱՆՈՒԱԿԱՒՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐ
ՄԱՆՈՒԱԿԱՒՈՐ ՍՆՈՒՆԴ ԵՒ ՍՆՈՒՆԴԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼՔԱՀԱՅՈՑ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ԱՅԳԱԶԳԱԿԱՆ

ԹԻՒ 3.— ԿԻՐԱԿԻ, 29 ՄԱՅԻՍԻ 1919 ԹՎԱԿԱՆԻ

Գին։

=Նկատի առնելով, որ Նշանաւոր Հայ Գործիչներ մը եւ Հասարակական Կազմակերպութիւններ մը Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան դէմ ուղղուած Հրապարակային Յայտարարութիւններով կը Հրահրեն Հայ Ժողովուրդը Ներքին Պատերազմի մէջ Ներքաշելու Ահաւոր Վտանգին, որ Հայ Ժողովուրդին Կրկին Անդունդին մէջ պիտի Նետէ եւ Հայրենիքը Ամայացնէ։

=Նկատի առնելով, որ Հայ Ժողովուրդը Ներկայ Ծանր Պայմաններուն մէջ Ներքին Խռովութեան Հետեւանքով Կրնայ Ենթարկուիլ Ամենաանդութ Ոճրագործութեանց